

ՀԱՅ- ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ  
 ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅԲԵՐՈՒՄ  
 ԱՐԱՍ ԱՆԱՆՅԱՆ

Եթե 20-րդ դարի սկիզբը կարելի էր բնութագրել քաղաքական վայրիվերումների, պատերազմների և աշխարհի վերաձևման եզրերով, ապա նոր դարի մարդն ապրում է համաշխարհայնացման և ինտեգրման հասկացությունների համատեքստում: Գլոբալիզմի բազմաթիվ վերլուծաբանների կարծիքով նոր՝ 21-րդ դարն արդեն իսկ հանդիսանում է տեղեկատվության և տեղեկատվական տեխնոլոգիաների հաղթարշավի ժամանակաշրջան: Համամոլորակային այսօրինակ տեղաշարժի պատճառներից մեկը, թերևս հանդիսանում է համացանցը (Internet): 20-րդ դարի վերջում Հայոց ցեղասպանության ժխտման Անկարայի գիտնոցը համալրվեց նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի այս առաջավոր միջոցով: 1957 թվականին արձակվեց երկրի առաջին արհեստական արբանյակը: Այս իրադարձությունը որոշ հետազոտողներ համարում են համացանցի ստեղծման մեկնակետը:<sup>1</sup> Բերքլիի համալսարանի գիտնականների բնորոշմամբ «ինտերնետը համակարգչային «ցանցերի ցանց» է, որը իրար է կապում քաղաքական, ռազմական, կառավարական, կրթամշակութային, առևտրային հաստատություններ, անհատ անձանց, հնարավորություն տալով փոխանակել թվայնացված տեղեկատվություն և ծառայություններ»:<sup>2</sup> Արդեն 60-ական թվականների վերջերին ստեղծվեցին տեղեկատվության փոխանակման առաջին ավտոմատացված համակարգերը, որոնց խնդիրը գիտահետազոտական տեղեկատվության արագ շրջանառությունն էր: Նմանօրինակ առաջին ցանցը՝ ARPA-ն (Advanced Research Projects Agency) հիմնվեց ԱՄՆ-ում, 1969 թվականին:<sup>3</sup>

Ներկայումս՝ համակարգչային առաջին ցանցի ստեղծումից մի քանի տասնամյակ անց, համացանցը հանդիսանում է ոչ միայն գիտական տեղեկատվության փոխանակման միջոց, այլև նոր «տեղեկատվական հասարակության» մշակույթի անքակտելի մասը՝ վերաճելով նոր հասարակական երևույթի, քանզի կարողացել է լուծել տեղեկատվական հասարակության առջև ծառայած հիմնական խնդիրը՝ վեր է կանգնել ազգային սահմաններից, ստեղծել է վերպետական վիրտուալ տարածություն: Գլոբալացման պայ-

մաններում տեղեկատվության փոխանակման նոր միջոցի ներուժն օգտագործվում է նաև քաղաքական և ռազմավարական նպատակներով: Հայտնի է, որ ինտերնետ կապի զարգացումը և տարածումը հովանավորվում է ԱՄՆ պետական հաստատությունների կողմից, որոնցից, մասնավորապես, Ազգային անվտանգության գործակալությունը, զբաղվում է տեղեկատվական հետախուզությամբ և հակահետախուզությամբ:<sup>4</sup>

Տարեցտարի ընդլայնվում է նաև համացանցից օգտվողների թիվը. վերջինս վերածվել է տվյալների յուրատեսակ բանկի, որի օգնությամբ սեփական պահանջումը քննեն են բավարարում միլիոնավոր մարդիկ: Թերևս պատահական չէ, որ տեղեկատվության այս կարևոր միջոցը զերծ չի մնացել քաղաքական գաղափարախոսություններից, քանզի մոլորակային կապի միջոցը միայն տեսության մեջ է համապատասխանում սոցիալոգ Կառլ Փոփերի կողմից առաջ քաշված «բաց հասարակության» սկզբունքին, որը պիտի ապահովի մարդու խոսքի և մտքի ազատությունը:<sup>5</sup>

Այսօր, առավել քան երբևէ, արդիական է տեղեկատվական անվտանգության մարտահրավերների ուսումնասիրությունը, քանզի տարածության և ժամանակի մասին ավանդական հասկացությունն օրեցօր նեղանում են, երկիր մոլորակը վերածվում է մոլորակային գյուղի՝ (global village), երբ աշխարհի ցանկացած անկյունում կատարված իրադարձությունները կայծակնային արագությամբ դառնում են համայն մարդկության սեփականությունը:<sup>6</sup> Արդի տեղեկատվական համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից է համացանցը:

\* \* \*

Թուրքական հանրապետության սկզբնավորման օրվանից Անկարան պետական քաղաքականության մակարդակի է բարձրացրել թուրքերի և Թուրքիայի պատմության ուսումնասիրությունը: Ինչպես ժամանակին նշել է Մուստաֆա Քեմալը. «պատմություն գրելը պատմություն կերտելու պես կարևոր է»: Ըստ այդմ էլ թուրքական պատմագրությունը փորձել է բավարարել քաղաքական իսթերիշմենթի պահանջարկը: Պաշտոնական Անկարայի պատմագրության ջահակիրներն ամեն գնով ջանում են «սպացուցել» հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ տասնամյակներ շարունակ շարչրկվող տեսանկյունը, ծուռ հայելու մեջ ներկայացնելով հայ ժողովրդի ծագումը և պատմությունը, Օսմանյան կայսրությունում հայերի վիճակն ու Մեծ Եղեռնը:

Հանրահայտ է, որ դեռևս անցած դարի սկզբներից, թե՛ Հայոց ցեղասպանության ընթացքում և թե՛ հետագայում, Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը համեմեց շինծու հորինվածքներով:<sup>7</sup> Այսօր էլ Անկարան շարունակում է իր որդեգրած խտտոր սկզբունքների քարոզը, որը տարեցտարի ստանում է նոր երանգավորումներ, սակայն թուրքական գիտության «նոր խոսքերը», միևնույն է, միտված են Հայոց պատմության հարմարեցված սրբագրմանը: Պատկերը նույնն է նաև թուրքական ուրացության մեքենայի կողմից օգտագործվող համացանցային էջերում. նոր շապիկի, ավելի «տպավորիչ» գունավորման ներքո քողարկված է շարչրկված հին բովանդակությունը՝ կառուցված ստի և կեղծիքի թուրքական մեթոդաբանության վրա: Ինչպես նշեցինք, համացանցն ի սկզբանե հանդիսանալով կարևոր քարոզչամիջոց, նպատակային կերպով օգտագործվել է նաև Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քա-

դարականությունն առաջ տանելու նպատակով: Թուրքական պաշտոնական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների էջերում լայնորեն ներկայացվում և լուսաբանվում է խնդրո առարկայի վերաբերյալ առկա թուրքական տեսակետը: Ցավոք այս հիմնախնդիրը մեզանում ցայսօր էլ բավարար կերպով չի ուսումնասիրվել:

Հարկ ենք համարում նշել, որ դեռ 1980-ականների վերջին համացանցի օգտագործողների շրջանում սկսվեց լայնորեն քննարկվել Հայոց ցեղասպանության հիմնահարցը: Հարցը բազմիցս արծարծվում էր UNIX համակարգի «նորությունների խմբերում» (newsgroup)<sup>7</sup>, որտեղ տեղեկատվության ներկայացման ազատությունը հնարավոր էր դարձնում տարատեսակ բանավեճերի մեջ ներգրավվել համացանցին առնչվող բազմաթիվ անձանց: Համակարգչային ստույգ վիճակագրությունը փաստում է, որ դեռ 1989թ. UNIX համակարգի ավելի քան մեկ միլիոն օգտագործողներից շուրջ 20000-ը հնարավորություն են ունեցել հետևելու այն նորությունների խմբերին, որտեղ ընթացել են Հայոց ցեղասպանության և հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ բանավեճեր:<sup>8</sup> Հատկանշական է, որ համացանցային առաջին քննարկումներում երբևէ չեն մասնակցել պատմաբաններ (համացանցի օգտագործման համար 1980-ականները բնութագրվում են որպես նեղ մասնագետների՝ հիմնականում էլեկտրոնիկայի և նոր տեխնոլոգիաների մասնագետների կողմից օգտագործման ժամանակահատված):

Համակարգչային տեխնոլոգիաների արագ զարգացմանը զուգընթաց (համացանցային կայքերի ստեղծում (website) արտաքին ձևավորման գրավչություն (interface), որն ի դեպ UNIX համակարգում համարյա բացակայում է, ինտերնետային կայքէջերի ձևավորման պարզություն) շատացան նաև հայ-թուրքական հարաբերությունների և Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական պաշտոնական պատմագրության տեսակետները ներկայացնող կամ կրկնող կայքերը:

\* \* \*

Հայկական հարցի վերաբերյալ թուրքական համացանցային էջերը կարելի է դասակարգել մի քանի սկզբունքներով. դրանցից յուրաքանչյուրը միտված է որոշակի լսարանի ու լուծում է հստակ քարոզչության խնդիրներ: Հատկանշական է, որ թուրքական մանօրինակ համացանցային էջերում ներկայացված տեղեկությունները հաճախ կրկնում կամ փոխլրացնում են իրար: Թուրքիայի պետական կառավարման որոշ հաստատությունների էջերում հատուկ անդրադարձ է կատարվում հայերի ու Հայոց ցեղասպանության վերաբերյալ ապատեղեկատվության տարածմանը, հակահայ քարոզչությանը՝ այժի են ընկնում Թուրքիայի Արտաքին գործոց նախարարության<sup>9</sup>, Չինված ուժերի<sup>10</sup>, Ազգային ժողովի<sup>11</sup>, Մշակույթի և զբոսաշրջության նախարարության<sup>12</sup>, այլ գերատեսչությունների<sup>13</sup>, արտասահմանում թուրքական դիվանագիտական ներկայացուցչությունների<sup>14</sup> և այլ կայքերը:

Համացանցում ներկայացված են նաև հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ թուրքական տեսակետը ներկայացնող «մասնագիտացված էջեր»:<sup>15</sup> Նշենք, որ խնդրո առարկային է նվիրված նաև կիսապաշտոնական Եվրասիական ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի հովանու ներքո գործող «Հայկական հետազոտությունների

ինստիտուտի» կայքէջը:<sup>16</sup> Հայոց ցեղասպանության ուրացության պաշտոնական տեսակետն են արտահայտում նաև թուրքական որոշ համալսարաններում ստեղծված հայկական հետազոտությունների կենտրոնների կայքերը:<sup>17</sup>

Նշենք, որ հիմնականում արտաքին սպառնանքն են ուղղված արտերկրում գործող թուրքական կազմակերպությունների ցանցային ռեսուրսները, մասնավորապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող թուրքական կազմակերպությունների համացանցային հանգույցները, որոնք գովազդում են հատուկ հակահայկական քարոզչության նպատակով ստեղծված տարաբնույթ նյութեր:<sup>18</sup>

Ի դեպ, աղբրեջանական համացանցի քարոզչամեքենան, թուրքերի հետ ձեռք ձեռքի տված, նույնպես կամովին լծվել է հակահայկական և բացահայտ ռասիստական մի քարոզարշավի՝ փորձելով ամեն զնով Արցախի հարցը կապել հայ-թուրքական հարաբերությունների հետ: Փաստենք, որ աղբրեջանական ինտերնետ էջերը աչքի են ընկնում ավելի ցայտուն հակահայկականությամբ:<sup>19</sup>

Ուշագրավ է, որ հիմնականում բոլոր էջերում ներկայացվում է միօրինակ ապատեղեկատվություն. պետական կառավարման մարմինների էջերում տեղադրված նյութերը հաճախ կրկնում են միմյանց (իրողությունն ակներև է թուրքական դիվանագիտական ներկայացուցչությունների համացանցային ռեսուրսների պարագայում, որտեղ Հայկական հարցին նվիրված հղումները հաճախ համացանցային ընթերցողին վերադարձնում են դեպի Թուրքիայի արտաքին գործերի նախարարության էջ): Թուրքական դիվանագիտական ներկայացուցչությունների մի նշանակալի մասի համացանցային էջերում ընդհանրապես տեղակայված չէ որևէ տեղեկատվություն ցեղասպանության խնդրի վերաբերյալ: «Հայկական պնդումների» մասին նշվում է միայն այն պետություններում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների էջերում, որոնցում գործում է ակտիվ հայկական համայնք: Համարյա բոլոր էջերում, ամբողջական ծավալով ներկայացված է հակահայկական ապատեղեկատվական գրականությունը: Հարկ ենք համարում նշել նաև, որ կայքերում տեղ գտած «աշխատություններն» անվճար են. (համեմատության համար նշենք, որ համացանցում ներկայացված այլ կայքերն ունեն կոմերցիոն նպատակ: Փաստորեն թուրքական կողմը նպատակ չունի տնտեսական անմիջական շահ ստանալ իր գործունեությունից, ինչ-որ մեկն այդ բոլորի համար արդեն վճարել է: Ասել կուզի՝ համացանցում Հայոց ցեղասպանության ժխտումը և հայկական իրականության մեղափոխումը բարձրացված են ազգային-պետական քաղաքականության մակարդակի:

\* \* \*

Համացանցային ռեսուրսների բովանդակության «բնութագրականության» մասին տեղեկություն կազմելու առումով հարկ ենք համարում անդրադառնալ արտաքին գործերի նախարարության համացանցային կայքին: Այն ներկայացնում է թուրքական արտաքին քաղաքականության հիմնախնդիրների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը, պարունակում է անգամ քարոզչական նյութեր:

Դեռ անցած տարի, Թուրքիայի Արտաքին գործերի նախարարության համացանցային հանգույցը ենթարկվեց արմատական վերանայման:

Կայքից հեռացվեցին բազմաթիվ նյութեր, այդ թվում, որոշակիորեն փոխվեց հայ-թուրքական հարաբերությունների պատմությանը նվիրված հատվածը: Ինչպես և նախկինում, այժմ էլ Հայկական հարցը Թուրքիայի պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքէջերում ներկայացված է որպես կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Ի թիվս Հայոց ցեղասպանության հիմնախնդրի, նախկինում Թուրքիայի արտաքին գործերի նախարարության կայքէջում արտաքին քաղաքական խնդիրների թվում նշվում էին նաև Կիպրոսի հիմնախնդիրը, քրդական շարժումը, պայքարը միջազգային անաբեկչության դեմ, Էգեյան կղզու վիճահարույց հարցերը և այլն: Նշենք նաև, որ Հայոց ցեղասպանությունն Անկարայի դիվանագետները որակում են սոսկ որպես «հայկական պնդումներ»: Թվում է, թե թուրքական պատմաբանների հակազիտական գործունեության մասին վաղուց ամեն ինչ ասված է: Որևէ մեկի համար գաղտնիք չէ, որ պատմությունը, ավելի ճիշտ նրա նենգափոխված թուրքական տարբերակի քարոզումն ու հանրայնացումը Թուրքական հանրապետությունում բարձրացվել են պետական մակարդակի. Թուրքիան ցայսօր հրաժարվում է ճանաչել 1915թ. Օսմանյան կայսրությունում կատարված Հայոց ցեղասպանությունը: Ի դեպ, հենց պատմական անցյալի իրողություններն ու անցքերը հայ-թուրքական արդի հարաբերությունները պայմանավորող անկյունաքարային գործոններից են, որոնց տասնամյակի զարգացումների մասին անհնար է ամբողջական պատկերացում կազմել առանց քննարկելու անցյալում ձևավորված քաղաքական և գաղափարախոսական ընկալումները, որոնց ազդեցությունը հայ-թուրքական հարաբերությունների վրա նշանակալի է: Հայաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքական կախովության վեկտորներն ինչպես տասնամյակներ շարունակ, այնպես էլ այժմ հակադիր ուղղվածություններ ունեն. երկու պետությունների աշխարհաքաղաքական կողմնորոշիչների ավանդական տարբերությունն ու հակադրությունն ավելի է շեշտվում պատմական ժառանգության խնդրում: Սեփական երկրի համար տարեգրություն «կերտող» Թուրքիան իսկապես խնդիր ունի ամեն զնով ապացուցելու իր պատմական լեգիտիմությունը: Պատմության նենգափոխումն Անկարայի արտաքին քաղաքական գերատեսչության զինանոցի ամենագործածական զենքերից է: Դեռևս անցած դարի կեսերից Թուրքիայում լայնամասշտաբ շարժում սկսվեց հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը համալրելու շինծու հորինվածքներով (որոնց թվում արտաքին քաղաքականության գերատեսչության կողմից հրապարակված «Հայկական հարցը, 9 հարց, 9 պատասխան», Հիթ. Ու. Լուրիիի «Ամերիկյան Կոնգրեսը և Արդիվ Հիտլերը հայերի մասին» և «Դեսպան Մորգենթաուի պատմությունից անդին» երկերը, «Հայկական դաժանություններն ու ջարդերը Կովկասում և Անատոլիայում պատմական փաստաթղթերի հիման վրա» ժողովածուն, Քամուրան Գյուրունի «Հայկական թրթռապանակը» և նմանօրինակ այլ աշխատություններ), որտեղ միտումնավոր խեղաթյուրվում է հայ-թուրքական հարաբերությունների ողջ դիպաշարը: Այսօրինակ աշխատությունները տեղ են գտնում նաև ուրացության համացանցային ռեսուրսներում: Օրինակ կայքէջում ներկայացված որոշ ուսումնասիրությունների հեղինակները երկու ժողովուրդների հարաբերությունների սկիզբը համարում են արարների վարձկան Բուդայի արշավանքը, իսկ քաղաքական առնչությունները տեղաշարժում են մինչև սելջուկների տիրապետությունը՝ այդ փաստը մեծահոգաբար մեկնաբանելով որպես

հայերի ազատագրում բյուզանդական լծից: Թուրք հեղինակները միաբերան պնդում են, որ հայերը պետականությունից զուրկ ազգ են եղել: Միևնույն ժամանակ միաձայն համառությամբ պաշտպանում են հնացած այն տեսակետը, որ հայերը ծագել են քրակիա-փոյուզիական ցեղերից: 1453թ. Կոստանդնուպոլսի գրավումը և 1461-ին Պոլսում հայկական համայնքի ձևավորումը թուրք հեղինակ Սահալի Սոնյելը համարում է երկու ազգերի հարաբերությունների գագաթնակետը: Ամբողջովին անհիմն է այն հայտարարությունը, թե հետագա դարերի ընթացքում «թուրք-հայկական հարաբերությունները կառուցվել են փոխադարձ վստահության, հարգանքի և համակրանքի վրա»:<sup>20</sup>

Ըստ այդ թյուր տեսության կարելի է կարծիք կազմել, թե Օսմանյան կայսրությունը հայ ազգի համար դրախտավայր էր, այնինչ հենց թուրքական լուծն է թելադրել Հայոց քաղաքական, տնտեսական, մշակութային և բարոյահոգեբանական նահանջը: Հանրահայտ է, որ Օսմանյան տիրապետությունը հայերի, որպես իրավագուրկ, ոչ մահմեդական տարրի, անազատ գոյության, քաղաքական և ազնվականական ընտրախավի ոչնչացման, ծանրագույն շահագործման, բռնազաղթի, մշակութային համատարած ամլության, բռնի կրոնափոխության օրհասական ժամանակաշրջան էր: Մյուս կողմից իր նվաճողական նկրտումների թիրախն Արևմուտքը դարձրած և իր հզորության գագաթնակետին գտնվող Օսմանյան կայսրության համար հայերը խնդրահարույց չէին. Օսմանները հայ համայնքը սկսեցին անվանել հավատարիմ համայնք (millet i-saddika)՝ թուրքական պետությանը մատուցած ծառայությունների համար: Վերջերս թուրք հեղինակները սկսել են հետաքրքրվել նաև հայ-թուրքական մշակութային հարաբերությունների պատմությամբ: Թուրք գաղափարախոսական մեքենան փորձում է հայ մշակույթը ներկայացնել որպես թուրքական քաղաքակրթությունից սերվող երակ: Իսկ ճշմարտությունն այն է, որ ի սկզբանե հայկական և թուրքական մշակույթները եղել են տարասեռ հարթությունների վրա: Իրականում ավելի առաջադեմ հայոց հոգևոր դաշտում թուրքական տարրերի ազդեցությունն ավելի քան մտացածին է: Հայկական մշակույթը գտնվելով զարգացման անհամեմատ բարձր մակարդակի վրա, չէր կարող ետընթացով դառնալ թյուրք մշակույթի մասնիկը: Անհերքելի փաստ է, որ հայերը հարստացրել են թուրքական մշակույթը՝ փոխաբերել ոչինչ չվերցնելով: Կայքէջը, կրկնելով թուրքական պաշտոնական պատմագրության թեզերը, հայերի ազատագրական ձգտումների ծագումը կապում է Վիեննայի ճակատամարտում Օսմանյան կայսրության կրած պարտությունից մինչև 19-րդ դար ընկնող ժամանակաշրջանին՝ պայմանավորված ռուսական և արևմտյան կայսերապաշտական տերությունների խաղերով: Այս համատեքստում հարկ ենք համարում մեջբերել Նիքոլ և Հյու Փոպերի «Բողազերծված Թուրքիան» աշխատության մեջ հայ-թուրքական հարաբերություններին վերաբերվող հատվածներից մեկը: Հեղինակները նշում են. «Այսօր Հայկական հարցը թուրքերը ներկայացնում են լիովին խեղաթյուրված, արդի դասագրքերը չեն էլ հիշատակում, որ հայերն ունեին ամուր ազգային ինքնագիտակցություն շուրջ երկու հազար տարուց ավելի... տասնհինգ դար շարունակ գործածում են իրենց ուրույն գիրը և միջնադարյան կրոնամշակութային հրաշալի կոթողներ են ստեղծել»:<sup>21</sup> Մերկապարանոց են հնչում թուրք հետազոտողների այն տեսակետները, որ հայերի համար Օսմանյան կայսրությունում ապահովված էին կեցության և գոյության

լավագուն պայմանները: Մասնավորապես Թալեաթ փաշան «Միություն և առաջադիմություն» կուսակցության Մալոնիկում կայացած գաղտնի խորհրդակցությանը, անդրադառնալով քրիստոնյաների և մահմեդականների իրավահավասարության հարցին, նշում էր. «Դա անիրագործելի երազանք է»:<sup>22</sup>


Անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների ներկա վիճակին Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հայտարարում է. «հայերի կողմից տարվառվող այս մեղադրանքը... բարդացնում է Հայաստանի հետ հարաբերությունների բարելավումը և խնդրի հավասարակշիռ քննարկումը»:<sup>23</sup> Այս առումով տարօրինակ չէ, որ թուրք պատմաբան Ջեզմի Յուրթսենը իր «Գարակազմիկ» հայտնագործություններով ավելի հեռու է գնում հայտարարելով, որ հակառակը՝ 1916-1917 թվականներին հայերն են կազմակերպել թուրքերի ցեղասպանություն, որի արդյունքում սպանվել է 500000 թուրք:<sup>24</sup> Թուրքական պետական պաշտոնյաները ցեղասպանության վերաբերյալ որդեգրել են «Ցանկացած նման մեղադրանք անհիմն է» անհաշտ սկզբունքը: Դպրոցական ծրագրերում և դասագրքերում Եղեռնը ներկայացվում է անփոփոխ սցենարով. ռուսների ձեռքին խաղալիք դառնալով՝ հայերն սկսեցին կոտորել թուրքերին, և օսմանյան կառավարությանը ոչինչ չէր մնում հայերին արտաքսելուց զատ: Ուրեմն և «մարտի դաշտից դեպի Միրիա տարագրության ճանապարհին գռված հայերի համար *թուրք ազգը պատասխանատու չէ* (ընդգծումը մերն է - Ա. Ա.)»:<sup>25</sup> Այս ոգով են դաստիարակվում թուրք երիտասարդ սերունդները: Մերժելով որևէ պատասխանատվություն երիտթուրքական վարչախմբի իրականացրած ոճրի համար՝ Թուրքիան խորացնում է առանց այդ էլ խորագնա հայ-թուրքական կնճիթը:

Հայ-թուրքական հարաբերությունների և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման վերաբերյալ կատարուող պարունակում է, Թուրքիայի արտաքին գործերի նախարարության «կարևորագույն փաստաթղթերը» (օրինակ՝ 2002թ. ապրիլի 18-ին ՄԱԿ-ում Թուրքիայի մշտական ներկայացուցչի տեղակալի դիմումը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային), թուրքական արտաքին գործերի նախարարության մամլո հաղորդագրությունները, զրքեր (մեծամասամբ ներկայացված է աշխատությունների ամբողջական տեքստը կամ կարևորագույն հատվածները, ինչին անդրադարձանք քիչ վեր) և հրապարակումներ, որոնք արտացոլում են XIX-XX դարերի հայտնի անցքերի պատմության թուրքական նենգափոխված պատմագրության և օտարերկրյա ռեզիդենտական տեսակետները:<sup>26</sup>

Էջի թուրքերեն հատվածում, որը, ի դեպ, տարբերվում է անգլերեն տարբերակից, ներկայացված է համանման ցանկ, սակայն այն պարունակում է նաև այլ լրացուցիչ «փաստաթղթեր»: Օրինակ, ԱԳՆ կայքէջը, «Արդյոք թուրքերը կազմակերպել են հայերի ցեղասպանությունը 1915-ին» վերտառության տակ ներկայացնում է հետևյալ տեսակետը. «Հայկական համայնքները, - գրում է այն, - ցրված փնելով Օսմանյան կայսրության ողջ տարածքում ապրում էին որպես հավատարիմ և որոշ դեպքերում, նաև սուլթանի առանձնաշնորհյալ հայատակներ: Նրանք կարող էին ծառայել որպես նախարարներ, դեսպաններ, բժիշկներ, պալատական երաժիշտներ, առևտրական բանագնացներ և այլ նմանօրինակ պաշտոններում: Սկսված 19-րդ դարի վերջին քառորդից հայկական ազգայնական/անջատողական խմբերը սկսեցին անջատողական տրամադրություններ սփռել Օսմանյան

կայսրության հայ բնակչության շրջանում: Այս ավազակախմբերը կազմակերպեցին մի քանի ապստամբություններ տարբեր նահանգներում, որոնցից են Ձեյթունի (1862-1895), Էրզրումի (1890), Վանի (1895-96), Ադա-նայի (1909) և այլ ապստամբություններ, որոնց ընթացքում հազարավոր մուսուլմաններ սպանվեցին: Առաջին աշխարհամարտի ընթացքում նրանք միացան ներխուժած ռուսական և ֆրանսիական զորքերին: Նրանք աս-պատակում էին օսմանյան գումակները, վայրերի հարձակումներ էին կա-տարում Արևելյան Անատոլիայի թուրքական քաղաքների, ավանների և գյուղերի վրա, կոտորում դրանց բնակիչներին, այնպես, ինչպես դա կա-տարվեց Վանում 1915թ., և անում էին հնարավորը՝ ռուսական բանակի առաջխաղացումը հեշտացնելու համար: Նրանք հույս ունեին, որ ռուսա-կան հաջողություններին նրանց մասնակցությունը կվարձատրվի անկախ Հայաստանի ստեղծմամբ, որը պիտի քերվեր Օսմանյան կայսրության տարածքից: Այդ ընդվզումներին և ջարդերին ի պատասխան Օսմանյան կայսրությունը հրամայեց տեղափոխել հայկական բնակչությունը պատե-րազմական տարածքից դեպի կայսրության հարավային շրջանները: Առա-ջին աշխարհարարտի տարիները Օսմանյան կայսրության ողջ բնակչու-թյան համար լի էին տառապանքով: Պատմաբանները սահմանում են, որ ավելի քան 2 միլիոն մուսուլման զրկվել են կյանքից այդ շրջանի ընթաց-քում: Մարդիկ նահատակվում էին վառելիքի, պարենի, դեղորայքի և այլ մատակարարումների պակասի պատճառով, ինչպես նաև ժանտախտի և թերսնման պատճառով: Հայերի սկսած գործողություններն այնժամ, երբ պետությունն ակտիվորեն մասնակցում էր համաշխարհային պատերազ-մին ուժեղացնում էին այդ տառապանքը: Դա պատերազմի ողբերգության մասն է, ինչպես թուրքերի այնպես էլ հայեր համար: Բազմաթիվ հեղինա-կավոր գիտնականներ, որոնք մասնագիտացել են Օսմանյան պատմու-թյան ոլորտում այժմ և անցյալում նշել են, որ օսմանյան հայերին (?) որ-պես զոհ ներկայացնելը ճշգրիտ, համապատասխան և արդարացված չէ: Պատմական այս խնդրի վրա լույս սփռելու համար թուրքական կառավա-րությունը բացել է օսմանյան արխիվները և հասանելի է դարձրել օսման-յան հայերի վերաբերյալ ավելի քան չորս դարերի փաստաթղթերը: Սա պարունակում է նաև 1914-1922թթ. օսմանյան նախարարների խորհրդի արձանագրությունները: Հայերի պնդումներն Առաջին աշխարհամարտի ընթացքում Անատոլիայում տեղ գտած տառապանքի միակ զոհերը տեսնե-լու վերաբերյալ բորբոքում է արմատական թշնամություն և արդարացնում է հայկական ահաբեկչությունը, որն արդեն իսկ է տարբեր ազգությունների պատկանող 75 մարդու կյանք, որոնցից 36-ը թուրքական դիվանագետներ և դիվանագետների ընտանիքների անդամներ էին»:<sup>27</sup>

Արտաքին գործերի նախարարության կայքէջում ներկայացված են նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման վերաբերյալ Ան-կարայի պաշտոնական արձագանքի վերաբերյալ փաստաթղթեր: Օրի-նակ՝ 2001թ. հունվարի 18-ին Թուրքական կառավարության մամուլ հաղոր-դագրությունը, Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից Հայոց ցեղասպանու-թյան մասին օրինագծի ընդունման վերաբերյալ, որում մասնավորապես ասվում է. «Ֆրանսիայի Ազգային ժողովը, չնայած բոլոր նախազգուշա-ցումներին, այսօր ճակատագրական սխալ կատարեց պատմության և մարդկայնության առաջ, ընդունելով այսպես կոչված Հայոց ցեղասպանու-թյան օրինագծի նախագիծը: Թուրքիայի հանրապետությունը հատորեն





դատապարտում է Ֆրանսիայի Ազգային ժողովի այս որոշումը, որը ոչ միայն անտեսում է պատմական իրողությունները, այլև հանդգնում է մեղադրել Թուրքիային ցեղասպանության հանցագործության մեջ, որը սակայն Թուրքիան երբևէ չի կատարել: Թուրքական կառավարությունը մերժում է այդ օրինագիծն իր բոլոր հետևանքներով: Այս օրինագիծը դժգոհությամբ ընդունվեց մեր ժողովրդի կողմից և այն լրջորեն կվնասի մեր հարաբերությունները՝ հանգեցնելով թուրք-ֆրանսիական լուրջ ճգնաժամի: Նմանօրինակ զարգացումը կունենա իր բացասական ազդեցությունը նույնպես մեր տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման վրա... Այս ամենի պատասխանատվությունն ընկած է Ֆրանսիայի վրա»:<sup>28</sup>

Թուրքիայի ԱԳՆ համացանցային կայքը կարելի է համարել հայ-թուրքական հարաբերությունների դիպաշարի և Հայոց ցեղասպանության նենգավորման «մոդելային» օրինակ: Իրենց ծայրահեղ հակահայկակա-նությանը դիվանագիտական գերատեսչության էջից չեն տարբերվում նաև այլ հաստատությունների համացանցային կայքերը:

Ձիմված ուժերի էջում 2001 թվականի հունվարի 23-ին տեղադրված նյութն աչքի է ընկնում ծայրահեղ ազգայնամոլությամբ և շովինիզմով:<sup>29</sup> Նյութը, որ կազմված է ութ մասից, ինքնին աչքի չի ընկնում որևէ նորությամբ, այն հիմնականում կրկնում է թուրքական պաշտոնական պրոպագանդայի չարչրկված և խտտոր սկզբունքները: Թուրքական բանակի ընկալումներով «Տարբեր երկրներում բնակվող հայկական խմբերը 1960-ական թթ. երկրորդ կեսից սկսած մախսաձեռնեցին Թուրքիան գրպարտող քարոզարշավ...», որը 1973թ. փոխակերպվեց «հայկական արյունոտ ահաբեկչության»: Ժխտելով Հայոց ցեղասպանությունը թուրքական պաշտոնական շրջանակները հանդես են գալիս «գարակազմիկ» գյուտով առ այն, որ գոյություն ունի ինչ որ դիվական «Չորս T» ծրագիր՝ միտված ցեղասպանության վերաբերյալ իրազեկության բարձրացման և միջազգային ճանաչման, ինչպես նաև տեռորի միջոցով Թուրքիային տարածքային պահանջներ ներկայացնելուն:

Ի դեպ՝ նմանօրինակ անհիմն հայտարարություն է հանդիպում նաև Թուրքիայի մշակույթի նախարարության էջում: Այս հայտարարությունը չունենալով որևէ իրական հիմք բորբոքում է փոխադարձ անվստահության և թշնամության մթնոլորտը:<sup>30</sup>

Անտեսելով ամողջ բանականությունը, թուրքական պաշտոնական քարոզամեթոդն շարունակում է մտացածին մեղադրանքների շրջանառությունը: Այս հայտարարության համատեքստում տարօրինակ են հնչում նաև պաշտոնական Անկարայի պաշտպանության գերատեսչության էջում տեղակայված մեկ այլ հայտարարություն, համաձայն որի, իբր Տեր-Պետրոսյանից հետո նախագահ դարձած Քոչարյանը «խորախտսեց ծայրահեղ ազգայնական շարժումները և Թուրքիայի նկատմամբ սկսեց վարել կոշտ քաղաքականություն»: Որպես հիշեցում նշենք, որ Թուրքիան Հայաստանի հանրապետության հետ ցայսօր չի հաստատել դիվանագիտական հարաբերություններ. ավելին՝ առաջ քաշելով դրանց հաստատման նախապայմաններ, փակել է բնականոն հարաբերություններ հաստատելու դուռը: Միջազգային պրակտիկայում նորանկախ պետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հրաժարվելը հանդիսանում է բացահայտ թշնամանքի դրսևորում: Ասել կուզի՝ պաշտոնական Անկարան չի ցանկանում հանդուրժել անկախ Հայաստանի գոյությունը: Տեղեկատվու-

թյան մնացած մասերը նվիրված են հայկական ինքնության և հայ-թուրքական պատմական հարաբերությունների ուսումնասիրությանը:

Հեղինակները դժվարանում են պատասխանել «Հայաստանը որտե՞ղ է, որտեղի՞ց է սկսվում և որտեղ է վերջանում» հարցին: Համեմատության համար նշեն, որ տառացիորեն նույն հարցադրումներով է սկսվում Հայկական հարցի «ուսումնասիրող» Սուլեյման Զոջաբաշի «Ի՞նչ է և ի՞նչ չէ Հայկական հարցը» գրքույկը:<sup>31</sup> Հայոց պատմության հնագույն և հին շրջանի մասն միտումնավոր անտեղյակությունը կեղծ պատմաբանները համեմտում են նմանօրինակ հայտարարություններով, գործօրինակ. «Հանրագիտարանային տվյալները «Արմենիա» հասկացության տակ ընդգրկում են Երևանը, Մևանա լիճը, Նախիջևանը, Ուրմիա լճի հյուսիսային մասը և Մակուի շրջանը, իսկ այս շրջաններում ապրող ժողովրդին կոչում են հայեր»: Նույնքան հակահայկական է նաև Թուրքիայի մշակույթի և զբոսաշրջիկության նախարարության համացանցային կայքէջը, որում ներկայացվում է էլեկտրոնային փաստաթղթերի յուրատեսակ արխիվ, որն իր մեջ ներառում է օսմանյան սուլթանների հրամանագրերը, հայկական «տեղահանության» փաստաթղթերը, հայերի և հույների կողմից իբր թուրքերի դեմ կազմակերպված «ցեղասպանություններին» վերաբերվող հորինվածքներ: Կեղծված պատմության հետ մեկտեղ կայքէջում տեղ են գտել «ԱՄՆ 69 գիտնականների նամակը» (կայքէջում գրված է 68) հայտնի քարոզչական փաստաթուղթը:<sup>32</sup> «69 գիտնականների նամակը», որը հրապարակվել էր «Նյու Յորք Թայմս» թերթի էջերում, մինչև այժմ շրջանառվում է Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականության հողովություն: Նամակը հրապարակվել է գովազդային հիմունքներով. նպատակը՝ ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատում HJR 192 բանաձևի տապալումն էր:<sup>33</sup>

Նամակում մասնավորապես նշվում է. «Ներքոստորագրյալներս, ամերիկյան գիտնականներ ենք, որոնք մասնագիտացած են թուրքական, օսմանյան և միջինարևելյան ուսումնասիրություններում, խորապես մտահոգված ենք այն արտահայտություններով, որ տեղ են գտել Ներկայացուցիչների պալատի 192 միասնական բանաձևում (House joint Resolution), ինչն ապակողմնորոշիչ և ոչ ճշգրիտ է հետևյալ առումներով:

Մասնավորապես, չնայած ամբողջությամբ պաշտպանելով «մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշողության ազգային օր» սահմանելու գաղափարը, մենք վերապահումով ենք մոտենում տեքստի այն հատվածներին, որոնք իրենցից ներկայացնում են հատուկ ճանաչման դրույթներ.

«Մեկ ու կես միլիոն հայեր, որոնք 1915-ից 1923թթ. Թուրքիայի կողմից նախապատրաստված ցեղասպանության զոհերն էին...»

Մեր վերապահումները վերաբերում են «Թուրքիա» և «ցեղասպանություն» եզրերի օգտագործմանը, ինչը կարող ենք ամփոփել հետևյալում. • 14-րդ դարից մինչև 1922թ. այն տարածքը, որն այժմ հայտնի է որպես Թուրքիա, կամ ավելի ստույգ Թուրքիայի հանրապետություն, եղել է մասը բազմազգ, բազմակրոն պետության, որը հայտնի է որպես Օսմանյան կայսրություն: Միսալ կլինի հավասարեցնել Օսմանյան կայսրությունը Թուրքիայի հանրապետության հետ, այնպես ինչպես սխալ է հավասարության նշան դնել Հաբսբուրգների կայսրության և Ավստրիայի հանրապետության միջև: Օսմանյան կայսրության գոյությունն ավարտվեց 1922թ...

ստեղծեց այսօրվա Թուրքիայի հանրապետությունը... Թուրքիայի հանրապետությունը չի կրում որևէ պատասխանատվություն այն իրադարձությունների համար, որոնք տեղի են ունեցել Օսմանյան ժամանակաշրջանում:

• Ինչ վերաբերում է «ցեղասպանության» մեղադրանքին, հայտարարության ներքոստորագրյալներից որևէ մեկը չի ցանկանում նվազեցնել հայ ժողովրդի կրած տառապանքի չափը: Մենք միևնույն ժամանակ գտնում ենք, որ այն չի կարող դիտարկվել առանձին այն ցավազին փորձառությունից, որ կրել են տարածաշրջանի մահմեդական բնակիչները: Ծանրակշիռ փաստերն ապացուցում են, որ տեղի է ունեցել լուրջ միջհամայնքային ռազմական բախում (իրականացված մահմեդական և քրիստոնյա անկանոն զորամիավորումների կողմից), որոնք ամբողջացել են համաճարակների, սովի, Անատոլիայում տեղի ունեցած տառապանքների և ջարդերի ձևով»:<sup>34</sup>

Նամակն, ի թիվս այլ պատմաբանների, ստորագրել են նաև Հայոց ցեղասպանության պատմությունը միտումնավոր նենգափոխող ուսումնասիրողներ Ստենֆորդ և Էզել Շուտները, Բերնարդ Լյուիսը, Հիթ Լաուրիին և Ջասթին Մքքարթին: «Նյու Յորք Թայմսում» հրատարակված այս հայտարարության կնքահայրերը նշյալ պատմաբաններն են եղել: Մեր այս ենթադրությունն ապացուցում է 1985թ. Մայիսի 18-ին Թուրքիայի վարչապետ Թուրքգուֆ Օզալին ուղարկված Հիթ Լաուրիի նամակը, որտեղ շեշտը դրվում է ոչ թե պատմության ուսումնասիրության կարևորության, այլ ամերիկաթուրքական ռազմավարական հարաբերությունների վրա: Նամակը հիշեցնում է կատարված աշխատանքների յուրատեսակ հաշվետվություն, որտեղ հեղինակն անգամ նշում է, իբր բանաձևը պաշտպանողները տեղյակ չեն թե ինչ են անում: Ըստ նամակագրի՝ պատճառը «հայկական քարոզչությունն է», որն այս պարագայում հաղթանակ է տարել:<sup>35</sup> Ի դեպ, հայտարարությունը ստորագրած պատմաբանների մեծամասնությունը շարունակաբար ֆինանսավորվել է թուրքական պետության կողմից, շատերն անգամ չեն եղել 20-րդ դարակերպի պատմության մասնագետներ:

Տարօրինակ չէ, որ ուղարկված նամակին հետևում է վարչապետի շնորհակալական պատասխանը, որում նա շոտայի հաճոյախոսություններով է որակում ամերիկացի 69 գիտնականների քայլը և խոստանում, որ իր կառավարությունն անում է ամեն ինչ օսմանյան արխիվները բացելու համար. «Այս նպատակով, մենք հանձն ենք առել անհրաժեշտ քայլեր՝ մեր երկրում ապահովելու համար հսկայական քանակությամբ փաստաթղթերի արագընթաց դասակարգում, որոնք մենք պահպանել ենք մեր երկար և հարուստ պատմության ընթացքում, ինչպես նաև հեշտացնելու ենք գիտնականների համար այդ փաստաթղթերի հասանելիությունը: ...Անցած մի քանի օրերի ընթացքում Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովն ընդունել է անհրաժեշտ օրենսդրություն՝ տրամադրելու անհրաժեշտ ֆինանսավորում այդ նախաձեռնության համար»:<sup>36</sup>

Նույն կայքէջը, ճգնելով ամեն գնով ապացուցել իբր հայերը Թուրքիայի նկատմամբ նվաճողական նկրտումներ ունեն, ներկայացնում է նաև «Թուրքիյե» օրաթերթում հրատարակված հայկական մի քարտեզ:<sup>37</sup>

Հայ-թուրքական հարաբերությունների արդի փուլին է անդրադառնում Հայկական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքը, որտեղ, ի թիվս պատմական ուսումնասիրությունների, ներկայացվում է «Հայկական հետազոտություններ» ամսագիրը, որի վերջին երեք համար-

ներն ազատորեն հասանելի են համացանցի օգտագործողների համար:<sup>38</sup>

Ամսագրի մշտական հեղինակները Հայոց ցեղասպանության ժխտման գործում հմտացած ուսումնասիրողներն են (Ջասթին Մքքարթի, Բիլալ Շիմշիր, Էրիխ Ֆիզլ, Քամեր Քասիմ, Սեդաթ Լաչիներ և այլք): Հայկական հետազոտությունների ինստիտուտի կայքում ներկայացվում է թուրքական «հայագիտության» վերջին նվաճումները: Ուշագրավ է, որ ինստիտուտի կայքէջում ներկայացվում են նաև տարաբնույթ գրախոսականներ, որոնք վերաբերվում են հայ-թուրքական հարաբերությունների պատմությանը: Եթե թուրքական ժխտման կանոններին համապատասխանող աշխատությունները արժանանում են կենտրոնի դրվատական գնահատականին, ապա 1915թ. պատմական իրականությունը ներկայացնող աշխատություններն արժանանում են քննադատության:<sup>39</sup> Մասնավորապես՝ ինստիտուտի հարվածի փրախ է դարձել Սամանթա Փաուերի «Հարց դժոխքից. Ամերիկան և ցեղասպանության դարը» աշխատությունը: Հարվարդի հեղինակավոր Ջոն Քեննեդի կառավարման դպրոցի Մարդու իրավունքների քաղաքականության Քարրի կենտրոնի վարիչ-տնօրեն Սամանտա Փաուերի աշխատությունը փորձ է պատասխանելու այն հարցին թե ինչու՞ ԱՄՆ-ի պետական այրերը, որոնք առիթը բաց չեն թողնում կոկորդ պատռելով դատապարտելու ցեղասպանության հանցագործությունը, երբեք հետևողական չեն լինում, երբ գալիս է խոսքից գործին անցնելու ժամանակը: Աշխատանքը ներկայացնում է այն խիզախ ամերիկյան գործիչներին, որոնք վտանգելով իրենց կարիերան քաջություն են ունեցել բարձրաձայնել իրենց տեսակետը, ստիպելու համար Ամերիկային գործել: Գրքում ներկայացված է ամերիկյան քաղաքականությունը ցեղասպանության հարցի վերաբերյալ ընդհանրապես: Ու թերևս թուրք ուսումնասիրողները չանդրադառնալին աշխատությանը, եթե գրքի առաջին գլուխը, անվանված «Ցեղի սպանող» (Race murder), ամբողջությամբ նվիրված չլիներ հայերի ցեղասպանությանը Օսմանյան կայսրությունում:<sup>40</sup> Այն անդրադառնում է օսմանյան կառավարության կողմից հայերի ցեղասպանության կազմակերպմանն ու իրականացմանը: Ներկայացվում է պաշտոնական Վաշինգտոնի կրավորական վերաբերմունքը խնդրո առարկայի նկատմամբ, ինչպես նաև ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի անձնուրաց խիզախությունը: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ ԱՄՆ-ը շահագրգռված չէր սրել հարաբերությունները Քառյակ դաշինքի անդամ Օսմանյան կայսրության հետ և սոսկ հայերի համար Առաջին աշխարհամարտում չէր ցանկանում կորցնել իր չեզոքությունը կորցնելու մեջ: Հետագայում 1918թ. և դրանից հետո Հայոց ցեղասպանության դատապարտումը դրվեց մեծ պետությունների և նոր Թուրքիայի հարաբերությունների զոհասեղանին: Հետագայում, հայերի ցեղասպանություն տպավորված, հայտնի իրավաբան Լեմկինն առաջարկեց օգտագործել ցեղասպանություն եզրը:

ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման պայքարին հակազդելու թուրքական քարոզչությանը լծված է Ամերիկյան թուրքական կազմակերպությունների համագումարը, որի կայքէջը նույնպես անդրադառնում է հայ-թուրքական հարաբերությունների պատմությանը: Ի դեպ, խնդրո առարկայի վերաբերյալ կայքէջում տեղ գտած բոլոր նյութերը (եզակի բացառությամբ) անգլերեն են, ինչը փաստում է համացանցային ռեսուրսի քարոզչական բնույթը:<sup>41</sup> Ուշագրավ է, որ կայքէջը փորձում է Հայոց ցեղասպանության ժխտումը, իբր, ամրապնդել «հայկական փաստարկներով»:

Էջն անդրադառնում է Հ. Քաջազնունու «Հ.Յ. Դաշնակցությունը այլևս անելիք չունի» աշխատությանը, սակայն տեղեկատվությունը պատրաստած հեղինակը որևէ հղում չի անում գրքի բնագրին:<sup>42</sup>

Թուրքական քարոզամեքենայի վերջին հնարքներից է հայերին իբր «հայերի» միջոցով հերքելու քաղաքականությունը: Իրականում այս գործելաոճը թուրքերի համար նորություն չէ: Դեռևս 1912թ. երիտթուրքերը մեկտեղել էին Պուսի նախկին պատրիարք Օրմանյանին հայազգի այլ գործիչների (թուրքական «Մարահ» թերթի խմբագիր Տիգրան Քելեկյան, բանկիր Գալուստ Կյուպեենկյան եւ այլք) հետ ու ստիպել, որ վերջիններս աջակցություն հայտենեն օսմանյան կառավարության կողմից մշակված հայկական բարենորոգումների կիսատ-պռատ ծրագրին:

1980-ականներին Թուրքիայում բնակվող հայերի դրության մասին հիացական խոսքերով էր արտահայտվում Պուստ մեկ այլ պատրիարք, որի հայտարարությունները տեղ էին գտնում Հայոց ցեղասպանությունը ժխտող թուրքական քարոզչական հրատարակություններում: Փաստորեն, պաշտոնական Անկարայի նպատակը մնում է անփոփոխ, իսկ ցեղասպանության ուրացության զինանոցում ավելանում են նոր միջոցներ: Դրա վառ վկայությունը «Թուրքիայի հայերի» համացանցային հանգույցն է:<sup>43</sup> Իրականում համացանցային այս կայքը Թուրքիայում բնակվող հայերի հետ որևէ առնչություն չունի: Զգիպես ինչու «Թուրքիայի հայ համայնքի» էջի նյութերը տրամադրել էր միայն Բոյուս Ֆեյնը, որը Ամերիկյան թուրքական կազմակերպությունների համագումարի իրավախորհրդատուն է: Այս կայքի կազմողներն առաջնորդվել են «գավազույն պաշտպանությունը հարձակումն է» նշանաբանով և ներկայացված նյութը բացում են Եվրոպական միության անդամ պետություններին ցեղասպանություններ գործելու մեղադրանք ներկայացնելով: Ցեղասպանական գործողություններ կատարելու համար մեղադրվում են Գերմանիան, Ֆրանսիան, Բելգիան, Պորտուգալիան, Իսպանիան, Մեծ Բրիտանիան, Ավստրիան, Բելգիան Հունաստանը, Իտալիան, Նիդեռլանդները, ԱՄՆ-ը, Ավստրալիան և Նոր Զելանդիան:<sup>44</sup> Կայքէջի հիմնական նյութը վերագրված է՝ «Հայ-մահմեդական ողբերգություն»-ն. Այո: Ցեղասպանություն. Ոչ». այն առանձնապես աչքի չի ընկնում նորոյթներով և կրկնում է թուրքական ուրացության պնդումները: Ըստ հեղինակի՝ Հայոց ցեղասպանության մեջ թուրքերին մեղադրելը ծախսողված գործ է, սակայն թուրքական քարոզչությունը «պիտի իրականացվի պատմական հավաստիության նկատմամբ ծայրահեղ բժախնդրությամբ. անհնար է անընդհատ կրկնել, որ Հայոց ցեղասպանության պնդումների ժխտումն ամենևին չի նշանակում պատերազմի ընթացքում հայերի մահացության և տառապանքների ժխտում, քանզի այս իրողությունը կարող է չեղուկել միայն քարսիրտներին»:<sup>45</sup>

Միևնույն ժամանակ թուրքական քարոզամեքենայի կողմից օգտագործվող ամերիկյան հեղինակը նշում է, որ 1914-1918թթ. Առաջին աշխարհամարտի ընթացքում ավելի շատ թուրքեր են զոհվել: Ծուռ հայելու մեջ ներկայացնելով Հայոց ցեղասպանության դիպաշարը, կայքէջը գրում է. «Օսմանյան թուրքերը մեղադրվում են Արևելյան Անատոլիայում հայկական բնակչության ոչնչացման ծրագրի պլանավորման և իրականացման մեջ, սկսած 1915թ. ապրիլ 24-ից երբ տեղափոխել են նրանց ռուսական ռազմաճակատից հարյուրավոր մղոններ հարավ-արևմուտք, ջարդելով նրանց, ովքեր դիմադրում էին: Չանգվածային տեղափոխումը (որը հա-

ճախ սխալ բնութագրում է ստանում որպես «տեղահանություն») պատճառ դարձավ հայերի մասսայական սպանությունների, որոնք իրականացվեցին քրդերի և այլ մահմեդականների կողմից, իսկ մահերի մի մասը պատճառ էին թերսնման, սովի և հիվանդությունների... հայկական կորուսների պնդվող թիվը սկսվեց 600000-ից, շուտով ուժեղացավ մինչև 2 միլիոնը: Նախապատերազմյան Արևելյան Անատոլիայում առավելագույնս՝ ապրում էր 1,3-1,5 միլիոն հայ»:<sup>46</sup>

«Փաստերի» այս ստահող շարադրանքը ցույց է տալիս, որ ամերիկացի իրավաբանը հիմնվում է թուրքական քարոզչական հետևյալ թեզերի վրա.

1. Օսմանյան կառավարության ուղղված մեղադրաքննանքին է, քանզի կառավարության նպատակը եղել է սոսկ Արևմտահայաստանի բնակչության տարհանումը (էվակուացիա), որը չի կարող որակվել, անգամ որպես տեղահանություն (դեպորտացիա).

2. Հայ բնակչության նկատմամբ պետության իրականացրած որոշակի հարկադրանքը եղել է իրավագործ՝ պետական իշխանությանը չենթարկվելու հետևանք, իսկ հայերի մահացության հիմնական մեղավորները ոչ թե թուրք կառավարիչներն ու օսմանյան իշխանություններն են, այլ քրդերն ու այլ մահմեդականները.

3. Վերջիններիս անօրինական գործողությունների ու պատերազմական ժամանակի դժվարությունների հետևանքով եղան բացմաթիվ զոհեր, սակայն հայերն ուժեղացնում են ցեղասպանության գոհերի թիվը, քանզի կայսրությունում հայ բնակչության թիվն անգամ չի հասել 1.5 միլիոնի:

Հասկանալով, որ միջազգային իրավական տեսանկյունից կարևորագույն խնդիրը ցեղասպանական նպատակի ժխտումն է, կայքէջը նպատակ ունի «համոզել», որ Օսմանյան կառավարությունը ցեղասպանություն իրականացնելու որևէ նպատակ չի ունեցել. «Ապացույցները ծայրաստիճան թույլ են: Կառավարության տարհանման որոշումը պատերազմական միջոցառում էր, թելադրված պետական ինքնապաշտպանություն, որը ուղղված չէր հայերի դեմ (պատերազմական վտանգից հեռու գտնվող տարածքների բնակչությունը թողնվել է տեղում), ընդհանուր առմամբ՝ նպատակ չի ունեցել տեղահանության միջոցով մահացության ու վտանգների պատճառ դառնալ: Օսմանյան կառավարությունը հրապարակել է հայերին պաշտպանելու և կերակրելու միանշանակ մեկնաբանվող օրենքներ, սակայն ռազմաճակատում տիրող իրավիճակի ու պատերազմական իրողություններից բխող սակավության պատճառով, որոնք ազդեցություն են ունեցել կայսրության ողջ բնակչության վրա), դրանք ինչպես հարկն է չեն իրականացվել»:<sup>47</sup>

Կայքէջը, բացահայտորեն պաշտպանելով թուրքական պաշտոնական պատմագրության տեսակետը, մեղմ ասած՝ ստում է: Ինչպես բազմիցս վկայել է՝ ցեղասպանության իրականացման որոշումը ծրագրվել և ընդունվել էր Իթթիհատ կուսակցության կողմից Առաջին աշխարհամարտի նախօրեին:<sup>48</sup> Ինչպես փաստում են գերմանական արխիվային փաստաթղթերը, օսմանյան կառավարությունն Առաջին աշխարհամարտի ընթացքում հայերի իրավիճակի հետ կապված սեփական դաշնակիցների ամերևութ թողոքները հակադարձում էր հետևյալ հայտարարությամբ. «Դա ամենանշանակալի գործողությունն է, որը մինչև այժմ կատարվել է երիտասարդ Թուրքիայի կողմից: Գերմանացիները պետք է շնորհակալ լինեն մեզ, որ մենք վերացնում ենք նրա թշնամիներին»:<sup>49</sup>

\* \* \*

Վերջին ժամանակներս թուրքական հետազոտական հաստատություններն իրենց ուշադրությունը կրկին կենտրոնացրել են հայ-թուրքական հարաբերությունների խնդիրների վրա: Ի թիվս Հայոց ցեղասպանության ուրացության ավանդական արծարծմանը, թուրք քաղաքագետներին սկսել է հուզել Հայաստանի ներքաղաքական իրավիճակն ու արտաքին քաղաքականությունը: Այս առումով ուշագրավ է թուրքական «Haberanaliz» համացանցային կայքում հրապարակված մի քանի հոդվածներ:<sup>50</sup> Դրանց հեղինակն Անկարայում գործող և Թուրքիայի զինվորականության շահերը սպասարկող Եվրասիական հետազոտությունների կենտրոնի Կովկասյան հետազոտությունների բաժնի աշխատակից Հաթթեմ Չաբարլըն է: Վերջինիս «Հայ-ռուսական հարաբերություններն անկախությունից հետո» աշխատության հեղինակն է:<sup>51</sup>

Քարոզչական բնույթ ունեցող այս աշխատությունը ներկայացված է կենտրոնի կայքում և, ի տարբերություն հաստատության պատրաստած մյուս աշխատությունների, հնարավոր է ստանալ անվճար: Իր բավական թույլ աշխատությունում Չաբարլըն փորձում է ապացուցել հետեւյալ թեզերը.

- աշխարհաքաղաքական առումով Հայաստանն ապագա չունի, քանզի զուրկ է բնական ռեսուրսներից ու Այսրկովկասում բնակչության թվով եւ տարածքով ամենափոքր պետությունն է,
- Ռուսաստանի հետ Հայաստանի ռազմավարական համագործակցությունն ավելի ձեռնառու է Մոսկվային, որի համար ՀՀ-ն սոսկ ռազմակայան է և Վրաստանի ու Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու միջոց:
- Ռուսաստանի հետ համագործակցությունը նպաստում է Հայաստանի հանրապետության միջազգային մեկուսացմանը:

Թուրքական հետազոտական հաստատությունների խնդիրը մնում է անփոփոխ. հարվածել Հայաստանի հանրապետության հեղինակությանը, կասեցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, հասնել Արցախյան հարցի ադրբեջանամետ լուծման: Հայոց ցեղասպանության 90-ամյակի նախօրյակին թուրքական քաղաքական շրջանակները փորձում են անել հնարավորը, որ հայ ժողովուրդը 20-րդ դարի առաջին ցեղասպանության դատապարտման գործում չունենա դաշնակիցներ: Այս առումով ուսումնասիրողի ուշադրության կենտրոնում ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի՝ ՄԱԿ-ի Օսլոյի մի համակենտրոնացման ճամբարի ազատագրման 60-ամյակին նվիրված նիստում ներկայացված ճառի այն հատվածն է, որում ՀՀ արտաքին գործերի նախարարը հիշեցնում է Հիտլերի հայտնի խոսքերը՝ հրեաների զանգվածային ոչնչացման հրամանը տալուց առաջ. «Վերջապես, ո՞վ է այսօր հիշում հայերին»:

Չաբարլըն կաշվից դուրս գալով՝ փորձում է ապացուցել, որ Հայաստանի արտգործնախարարի այդ հայտարարությունը սոսկ Հայաստանում առկա հակահրեական տրամադրությունները քողարկելու ձև է: Չաբարլըն վկայակոչում է «Ազգ» օրաթերթի որոշ հրապարակումներ, որոնք իր բացահայտում են հայերի հակասեմիտական տրամադրությունները: Թերևս, նա մոռանում է, որ թուրքական հակահրեականության դրոշակակիր «Յենի շաֆաքը» պարբերաբար գրում է՝ իբր, հրեաները ցանկանում են նվաճել Թուրքիան: Իսկ «Հուրիյեթը» մեղադրում էր Իսրայելին՝ Իրաքի քրդերին զինելու և նախապատրաստելու մեջ:

Հայերին հակահրեականության մեջ մեղադրելու պատճառը, կարծում ենք, հետևյալն է. մույն աղբյուրը մի քանի օր առաջ գրել էր, որ հայերն ու հրեաները ԱՄՆ-ում պատրաստվում են անցկացնել Հայոց ցեղասպանության եւ Հոլոքոսթի վերաբերյալ համատեղ մեծ գիտաժողով: Այս փաստը հարուցել էր թուրքերի զայրույթը: Փաստորեն, հրապարակումը նպատակ ունի սուկ ձախողել Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված հայ-հրեական համատեղ միջոցառումներից մեկը եւ համոզել հրեաներին, որ Հայաստանում ահազանում է հակասեմականությունը, և հայերը ժխտում են Հոլոքոստը:<sup>52</sup>

Նույն աղբյուրն անդրադառնում է Հայաստանում հնարավոր քաղաքական զարգացումներին, հրապարակելով «Արդյոք շո՞ւտ են բացվում ձմեռադիկները Հայաստանում» հոդվածը, որը իշխանափոխության հնարավորությունների յուրատեսակ հաշվեկշիռ է: Ներկայացնելով այսրկովկասյան տարածաշրջանում քաղաքական ռեժիմների վիճակը, ինչպես նաև վրացական եւ ուկրաինական իրադարձությունների ազդեցությունը տարածաշրջանում քաղաքական հնարավոր զարգացումների վրա, վերլուծաբանը եզրակացնում է, որ Հայաստանում հեղափոխական հեռանկարների քննարկումը չի կարող միանշանակ գնահատվել: Ինչպիսի՞ իշխանություն կցանկանար Անկարան տեսնել Երևանում: Համոզված ենք, որ Թուրքիան չէր ցանկանա անգամ քարտեզի վրա տեսնել Հայաստան պետություն. մեր երկրի անկախացման առաջին իսկ օրվանից թուրքերը երբևէ չեն փայլել հանդուրժողականությամբ:

Անկարայում, ինչպես փաստում է «Ռադիկալ» թերթը, այսօր զոջում են, որ հարաբերություններ չեն հաստատել հայ-թուրքական հարաբերություններում զգուշավորությամբ աչքի ընկնող ՀՀԸ-ական իշխանությունների հետ, որը երկկողմ հարաբերությունների կարգավորման համար ամենևին պարտադիր չէր համարում Հայոց ցեղասպանության հարցի արժարծումը: Անկարան գիտակցում է, որ հեղափոխությունը հանգեցնելու է պետական ապարատի վերածանցման, նոր առաջնորդները չեն կատարելու ժողովրդին տված խոստումները, ինչը հնարավորություն կտա, արդեն իսկ թուլացած քաղաքական համակարգի առկայության պայմաններում, թուրքերի հետ մերձեցում քարոզող ուժերին վերցնել իշխանությունը: Թուրքիայի արտաքին քաղաքականության պատասխանատուները հավանաբար սկսում են գիտակցել, որ Հայաստանի գործող իշխանությունների արտաքին քաղաքականության մասն ընթացքի դեպքում Թուրքիայի դիվանագիտական իմիջին բավականին հուժկու հարված է հասցվում (հարցականի տակ դեմոլ, օրինակ, Թուրքիայի «եվրահեռանկարը»), իսկ այս դեպքում կան Անկարան պիտի վերահիմաստավորի սեփական քաղաքականությունը, կան, ինչն ավելի շահեկան է թուրքերի համար, Հայաստանը պիտի փոխի արտաքին քաղաքականության վեկտորը: Հայոց ցեղասպանության 90-ամյակի տարում պաշտոնական Թուրքիայի թշնամական վերաբերմունքը է՛լ ավելի է սրվել: Այսօր արդեն թուրքերը խնդիր ունեն պայքարելու ցեղասպանության ճանաչման ճակատում միասնական գործող Հայաստանի եւ Մփյոռքի հետ: Թերեւս, այս պատճառով է Անկարան «հեղափոխականի համառոտ ձեռնարկներ» հրատարակում՝ փորձելով Հայաստանում դաշնակիցներ պեղել:<sup>53</sup>



\* \* \*

Ընդհանրացնենք. Հայոց ցեղասպանության փաստը Թուրքիան համատրեն չի ճանաչում, այն եղել և մնում է հայ-թուրքական հարաբերությունները պայմանավորող անկյունաքարային գործոնը, և Մեծ եղեռնի միջազգային ճանաչման գործում թուրքերն ակտիվորեն կիրառում են համացանցի ներուժը: Հնարավոր է շարունակել թուրքական կայքէջերի թվարկումը, դրանցում տեղ գտած հակահայ նյութերի վերլուծությունը (հաշվի առնելով այն, որ Թուրքիայի արխիվների կայքէջում, օրինակ, ներկայացված են արխիվային մի շարք փաստաթղթեր, իսկ Ազգային մեծ ժողովի հանգույցում կա խորհրդարանի հովանու ներքո հրատարակված հավաքական մենագրությունը)<sup>5</sup>, սակայն համացանցում առկա Հայոց ցեղասպանությունը ժխտող կայքէջերի առավել համապարփակ ուսումնասիրությունը չի կարող տեղավորվել միայն մի հոդվածի սահմաններում:

Արդի իրողությունների պայմաններում, փաստորեն, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման պայքարը սոսկ պատմական հարց չէ. պատմաբանները հիմնականում արել և շարունակում են իրենց գործը, մեկտեղում և վերլուծում են առկա փաստերը, գիտական շրջանառության մեջ մտցնում նորերը: Այսօր նրանց պիտի միանան դիվանագետներն ու իրավաբանները: Մեծ եղեռնի միջազգային ճանաչման հաջողության գրավականներից մեկը կարող է դառնալ նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը: Հայոց ցեղասպանությունը նաև քաղաքական և իրավական հարց է՝ դա հանցագործություն է մարդկության դեմ, որը չի կարող մնալ անպատիժ:

Հայ ժողովրդի չսպիացած վերքը կարող է մասամբ ապաքինվել, երբ թուրքական իշխանությունները խիզախություն ցուցաբերեն գոնե ճանաչելու և դատապարտելու Մեծ եղեռնը: Այնինչ նրա անմիջական հովանավորությամբ, ի լրումն նախկինում սանձազերծված կեղծարարական ինդուստրիայի, հրատարակվում են պատմական իրողությունները ծուռ հայելու մեջ աղավաղող աշխատություններ, գործի են դրվում հակահայկական համացանցային կայքեր, հիմնվում են գիտական կենտրոններ: Թուրքական պաշտոնական քարոզչամեքենան օգտագործում է ոչ միայն թուրք, այլև օտարազգի պատմաբանների ուժերը 20-րդ դարի առաջին ցեղասպանության ճշմարտությունը խեղաթյուրելու համար: Այսօր, առավել քան երբևէ անհրաժեշտ է թուրքական ուրացությանը հակահարված հասցնել ոչ միայն ավանդական եղանակներով, այլև օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Ավելի հանգամանալի տե՛ս Храмов Павел. Лавиринг Internet, Электроинформ, Москва, 1996.
- <sup>2</sup> Sh'u, What is the Internet, the World Wide Web, and Netscape? UC Berkeley - Teaching Library Internet Workshops.
- <sup>3</sup> Նույն տեղում:
- <sup>4</sup> [http://www.nsa.gov/about\\_nsa/index.html](http://www.nsa.gov/about_nsa/index.html) 18/01/03.
- <sup>5</sup> Василенко И. А. Политическая Глобалистика, Москва, 2000, стр 35.
- <sup>6</sup> Ավելի հանգամանալի տե՛ս, Василенко И. А., նշվ. աշխ. էջ 35:

- <sup>7</sup> Հայկական հարցին նվիրված, Թուրքիայում արդեն «դասականի» վերածված աշխատությունների մի մասն իրենց ամբողջ ծավալով ներկայացված են եղել Թուրքիայի արտաքին գործերի նախարարության համացանցի էջում <http://www.mfa.gov.tr/grupe/eg/default.htm> 15.01.2003
- <sup>8</sup> 1989- ի դրությամբ վերընշված համակարգում ներկայացված էին ավելի քան 600 նորությունների խմբեր. որոնք ունեին քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային և այլ ուղղվածություն: Այսօր արդեն նորությունների խմբերի քիվը հասնում է մի քանի հազարի:
- <sup>9</sup> Այս մասին ավելի հանգամանալի տե՛ս Addressing Turkish genocide Apologists, compiled by Dave Davidian, Volume I-IV, S.D.P. A. CRS Publication, 1989.
- <sup>10</sup> UNIX-ի նորությունների խմբերի բանավեճերը ցայսօր էլ շարունակվում են:
- <sup>11</sup> Տե՛ս, <http://www.mfa.gov.tr>.
- <sup>12</sup> Դեռ անցած տարի, Թուրքիայի արտաքին գործերի նախարարության համացանցային հանգույցը ենթարկվեց արմատական վերանայման:
- <sup>13</sup> Տե՛ս, <http://www.tsk.mil.tr>.
- <sup>14</sup> Տե՛ս, <http://www.tbmm.gov.tr>.
- <sup>15</sup> Տե՛ս, <http://www.kultur.gov.tr>.
- <sup>16</sup> Տե՛ս, <http://www.devletarsivleri.gov.tr>.
- <sup>17</sup> Տե՛ս, <http://www.turkey.org>, <http://www.tcberline.de>
- <sup>18</sup> Տե՛ս, <http://www.ermenisorumu.gen.tr>, <http://www.ermeni.tv>, <http://www.armenianreality.com>.
- <sup>19</sup> Տե՛ս, <http://www.eraren.org>.
- <sup>20</sup> Տե՛ս. օրինակ, <http://www.mersin.edu.tr/ermenisorumu/>, <http://www.ksu.edu.tr/ermeni/>
- <sup>21</sup> Տե՛ս, <http://www.ataa.org>
- <sup>22</sup> Համացանցում վարվող Ադրբեջանի հայատյաց քարոզչությունը մեկ այլ ուսումնասիրության նյութ է:
- <sup>23</sup> Sahali. R. Sonyel. Minorities and Destruction of the Ottoman Empire Ankara 1993, p. 38.
- <sup>24</sup> Nicole and Hugh Pope, Turkey Unveiled, NY, p 40.
- <sup>25</sup> Бернд Мюнниш. Европейцы ли турки, стр 26
- <sup>26</sup> Ավելի հանգամանալի տե՛ս Turkish Foreign Policy: A Synopsis: <http://www.mfa.gov.tr>, 25/01/2004
- <sup>27</sup> Akşam, 29.09.2000
- <sup>28</sup> Nicole and Hugh Pope, նշվ. աշխ., էջ 42:
- <sup>29</sup> Տե՛ս, <http://www.mfa.gov.tr/grupe/ad/adf/default.htm> , 10.05.2004.
- <sup>30</sup> Տե՛ս, <http://www.mfa.gov.tr/grupe/ad/adf/massacre.htm>, 11.11.2003:
- <sup>31</sup> Տե՛ս Press Release Made by the Turkish Government o the So- Called Armenian Genocide Bill Adopted by the French National Assembly, January 18.2001. <http://www.mfa.gov.tr>
- <sup>32</sup> Տե՛ս <http://www.tsk.mil.tr/genelkumay/uluslararasi/ermenisorumu.htm>, 23.01.2001.
- <sup>33</sup> Նույն տեղում:
- <sup>34</sup> Süleyman Kocabaş, “Ermeni meselesi: nedir, ne değildir?”, Istanbul, 1984, s., 3.
- <sup>35</sup> Տե՛ս [http://www.kultur.gov.tr/portal/popup\\_tr.asp?belgeno=4504](http://www.kultur.gov.tr/portal/popup_tr.asp?belgeno=4504), 12.09. 2003.
- <sup>36</sup> Տե՛ս, Armenian Allegations: Myth and reality: A handbook of facts and Documents: Compiled & edited by the Assembly of Turkish American Assosiations, Washington DC, 1987, p 106-107.
- <sup>37</sup> Ստորագրել են 69 պատմաբան և ուսումնասիրող:
- <sup>38</sup> Armenian Allegations: Myth and reality..., նշվ. աշխ., էջ 106-107:
- <sup>39</sup> Նույն տեղում, էջ 107:
- <sup>40</sup> [http://www.kultur.gov.tr/portal/popup\\_tr.asp?belgeno=4505](http://www.kultur.gov.tr/portal/popup_tr.asp?belgeno=4505) ,15/09/2003.
- <sup>41</sup> <http://www.eraren.org>, 15.05.2003.

- <sup>39</sup> Խնդրո առարկայի վերաբերյալ մասնավորապես տե՛ս. Արամ Անանյան, «Հարց դժողբից. Ամերիկան և ցեղասպանության դարը», Գարուն, 2003, թիվ 7-8, էջ:
- <sup>40</sup> Թուրքական հակազդեցության մասին տե՛ս  
[http://www.eraren.org/eng/book\\_review\\_schoshifrohel.htm](http://www.eraren.org/eng/book_review_schoshifrohel.htm) 29.04.03:
- <sup>41</sup> <http://www.ataa.org/ataa/ref/ref.html>, 09.08.2003.
- <sup>42</sup> <http://www.ataa.org/ataa/ref/katchaznouni.html>, 10.08.2003.
- <sup>43</sup> <http://turkisharmenians.faithweb.com/>, 15.01.2004.
- <sup>44</sup> <http://turkisharmenians.faithweb.com/>, 15.01.2004.
- <sup>45</sup> Նույն տեղում
- <sup>46</sup> Նույն տեղում
- <sup>47</sup> Նույն տեղում
- <sup>48</sup> Авакян А. Геноцид Армян 1915г. Механизмы принятия и исполнения решений, Ереван, 1995, стр. 6-31.
- <sup>49</sup> Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագիտական հարորդագրություններում (1915- 1918թթ. ) կազմող. ակադ. Վ. Միրայելյան, Երևան, 2004, էջ 65:
- <sup>50</sup> Տե՛ս <http://www.habernanaliz.com> .
- <sup>51</sup> Hattem Cabbarlı, Bağimsızlık Sonrası Ermenistan – Rusya İlişkileri, Ankara, 2004., տե՛ս <http://www.avsam.org>. 01.12.2004.
- <sup>52</sup> Խնդրո առարկայի վերաբերյալ տե՛ս «Երկիր», 04.02.2005 և 11.02.2005:
- <sup>53</sup> «Երկիր », 25.02.2005:
- <sup>54</sup> Տե՛ս, <http://www.thmm.gov.tr/vavinlar/yayinl/armenian.htm>, 01.08.2003.

## Резюме

Армяно-турецкие отношения и фактор геноцида армян на страницах турецких интернет-сайтов.

Арам Ананян

В статье рассматриваются некоторые аспекты турецкой внешней политики и государственной пропаганды в вопросе армяно-турецких отношений. Интернет, ровно как и остальные средства массовой информации, взят на вооружение и активно используется государственными структурами, политическим и научным истеблишментом Турции в вопросе отрицания геноцида армян в Османской империи. Официальная Анкара широко использует весь-пространство также для распространения своей искаженной версии истории армяно-турецких отношений. Турция ставит своей целью дискредитацию Армении и Армянского вопроса, она изо всех сил старается препятствовать международному признанию и осуждению первого геноцида 20-го века.

## Summary

Armenian-Turkish Relations and the Issue of Armenian Genocide on Turkish Websites.

Aram Ananyan

The study examines various aspects of Turkish foreign policy and state controlled propaganda on Armenian-Turkish relations. Internet, as well as other means of information, is employed by Ankara's government and her political-quasi academic establishment, to deny the Armenian genocide in the Ottoman Empire. For that purpose Turkey widely exploits World Wide Web to promote distorted denialist perspective on the history of Armenian-Turkish relations. Turkey tends to discredit Armenia and the Armenian Cause, it stabs to bring down international recognition and condemnation of the first Genocide of 20<sup>th</sup> century.